բէջանի և Վրաստանի ներկայացուցիչները, Ամերիկեան Կոմիտէի անդամները և ուրիշներ։ Պատուոյ պահակախմբի ուղեկցութեամբ Էջմիածնից եկել էր Ամենայն Հայոց Կաթուղիկոսը, որ նախագահում էր հոգեհանդիսամաղթանքի արարողութեանը։

Հոգեհանգստից ու մաղթանքից և վարչապետի՝ բանակին ուղղած ճառից յետոյ, սկսուեց զօրահանդէսը՝ հազարաւոր ներկաների ծափերի ու ցնծութեան աղաղակների մէջ։ Զօրամասերը՝ հետեւակ, հրետանի, ձիաւոր՝ զինուորական նաւագի ուղեկցութեամբ, անցնում էին խրոխտ շարքերով՝ յուզելով ու ոգեւորելով հասարակութիւնը։

Զինուորներից յետոյ սկսուեց աշակերտների, որբերի, արհեստակցական միութիւնների ու ժողովրդի շքերթը։

Հանդէսից յետոյ, տեղի ունեցաւ յայտարարութեան արարողութիւնը։ Հայաստանի Խորհրդի մուտքն ու դահլիճը նոյնպէս զարդարուած էին շքեղ՝ դրօշակներով, գորգերով ու ծաղիկներով։ Օթեակները բռնուած էին օտար պետութեանց ներկայացուցիչներով։ Մի օթեակ յատկացուած էր կաթուղիկոսին և իր շքախմբին։ Բեմի վրա տեղաւորուած էին Խորհրդի և կառավարութեան անդամները։ Դահլիճի առջևի մասում երևում էր զօր. Նազարբէգեանի պատկառելի դէմքը, միւս կողմը՝ նստած էր զօր. Փիրումեանը։ Սրահը բերնէ բերան լեցուած էր հիւրերով ու հանդիսականներով։

Հանդէսին նախագահում էր հանրային կրթութեան և արուեստի նախարար Գ. Մելիք-Ղարագէոզեանը, որ մի գրաւոր ճառով բացատրեց հանդէսի նշանակութիւնը, որից յետոյ նուագախումբը հնչեցրեց «Մեր Հայրենիք»-ը, որ լուեց յոտնկայս։ Մի պահ տիրեց խորհրդաւոր լռութիւն, որից յետոյ վարչապետը արտասանեց մի փոքրիկ ճառ և ժողովականների խանդավառ ծափերի մէջ, կարդաց հետեւեալ յայտարարութիւնը.

«Հայաստանի ամբողջութիւնը վերականգնելու և ժողովրդի լիակատար ազատութիւնն ու բարգաւաճումն ապահովելու համար Հայաստանի կառավարութիւնը, համաձայն բովանդակ հայ ժողովրդի միահամուռ կամքի ու ցանկութեան, յայտարարում է, որ այսօրուանից Հայաստանի բաժանբաժան մասերը մշտնջենապէս միացած են իրը անկախ պետական միութիւն։

«Ուղիղ մի տարի առաջ, ռուսահայերի համագումարից ընտրուած Հայոց Ազգային Խորհուրդը յայտարարեց իրեն անդրկովկասեան հայկական գաւառների բարձրագոյն իշխանութիւն։ Ազգային Խորհրդի կազմած կառավարութիւնն այդ բաղաքական ամսի մասին պաշտօնապէս պետութեանց ներկայացուցիչներին յայտնելուց յետոյ, այս մի տարուայ մէջ փաստօրէն հաստատել է իր իշխանութիւնն Անդրկովկասի հայկական գաւառներում։

«1919թ. փետրուար ամսին Երևան քաղաքում կայացած Արևմտահայ Երկրորդ Համագումարը հանդիսաւոր կերպով յայտարարեց, որ նա Հայաստանը միացեալ և անկախ է ճանաչում։

«Այժմ, Անդրկովկասում և օսմանեան կայսրութեան սահմաններում գտնուած պապենական հայկական երկիրների միացման և անկախութեան այս